

ՆՄՈՒՇ

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍԻՏ¹

1. Արդյո՞ք հողի սեփականության իրավունքից օգտվում են օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝

- 1) **հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,**
- 2) հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք,
- 3) հողի սեփականության իրավունքից օգտվում են միայն հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձինք,
- 4) հողի սեփականության իրավունքից օգտվում են օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

(Սահմանադրություն, հոդված 60, մաս 6)

2. Արդյո՞ք կարող է սահմանափակվել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝

- 1) մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը անձի հիմնարար իրավունքներից է և չի կարող սահմանափակվել,
- 2) **մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց**

¹ Որակավորման քննության թեստում կարող են ընդգրկվել հրապարակված նմուշում չընդգրկված՝ նոտարական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերից հարցեր:

Նմուշում մգեցված է ճիշտ պատասխանը:

հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- 3) մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և նպատակով,
- 4) մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար:

(Սահմանադրություն, հոդված 31, մաս 2)

3. Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները՝

- 1) **սահմանվում են միայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով,**
- 2) սահմանվում են միայն Սահմանադրությամբ և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով,
- 3) սահմանվում են նոտարական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով,
- 4) սահմանվում են միայն Սահմանադրությամբ:

(«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1)

4. Որո՞նք են նոտարի գործունեության սահմանափակումները՝

- 1) նոտարն իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել հանրային ծառայության պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից,
- 2) նոտարն իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, այդ թվում՝ մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեություն,

- 3) նոտարն իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել քաղաքական պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից,
- 4) **նոտարն իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից:**

(«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

5. Ո՞րն է նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք՝

- 1) նոտարի կողմից նոտարական գործունեության իրականացմանը, գործողության կատարմանը, մերժմանը, կասեցմանը, հետաձգմանը ներկայացվող՝ օրենքի և այլ իրավական ակտի նորմատիվ պահանջն ակնհայտ խախտելը,
- 2) էթիկայի կանոններն ակնհայտ խախտելը,
- 3) վերապատրաստման դասընթացների առնվազն 10 տոկոսին առանց հարգելի պատճառի չմասնակցելը,
- 4) **ճիշտ են 1-ին և 2-րդ կետերում նշված պատասխանները:**

(«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 1)

6. Ո՞ր գործարքը իրավունք չունեն ինքնուրույն կնքել վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակները՝

- 1) մանր կենցաղային գործարքներ,
- 2) օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ,
- 3) նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ,
- 4) **օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և կնքել ավանդի պայմանագրեր:**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 29, մաս 2)

7. Արդյո՞ք հնարավոր է նվիրատուի մահից հետո նվիրառուին նվերի հանձնում նախատեսող պայմանագիր կնքել՝

- 1) **նման պայմանագիրն առջինն է,**
- 2) հնարավոր է, եթե նվիրատուն իր կամքը արտահայտել է կտակով,
- 3) նման պայմանագիրը վիճարկելի է,
- 4) հնարավոր է, եթե նվիրատուի և նվիրառուի միջև առկա է ազգակցական կապ:

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 594, մաս 4)

8.Ո՞րն է ռենտայի պայմանագիրը՝

- 1) Ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) վարձակալության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար,
- 2) Ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) օգտագործման իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար,
- 3) **Ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար,**
- 4) Ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար կամ կատարել որոշակի աշխատանք:

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 571, մաս 1)

9. Արդյո՞ք իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները ունեն ապացուցողական ուժ՝

- 1) **իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և ունեն ապացուցողական ուժ այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք չեն ճանաչվել ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ,**
- 2) իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ, սակայն չունեն ապացուցողական ուժ,
- 3) իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և ունեն ապացուցողական ուժ, բացառությամբ դատարանում որպես ապացույց ներկայացվելու դեպքերի,
- 4) իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և չունեն ապացուցողական ուժ այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանը դրանք ապացուցողական ուժ ունեցող չի ճանաչել:

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 2)

10. Ի՞նչ տույժ է կիրառվում առանց հարգելի պատճառի նոտարական պալատի ժողովներին չհաճախելու կամ երեսուն րոպե և ավելի ուշանալու դեպքում՝

- 1) նոտարը կարող է ենթարկվել դրամական տույժի՝ 10000 հազար ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի նոտարական պալատի հաշվի համարի վրա,
- 2) նոտարը կարող է ենթարկվել դրամական տույժի՝ 30000 հազար ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի նոտարական պալատի հաշվի համարի վրա,
- 3) **նոտարը կարող է ենթարկվել դրամական տույժի՝ 50000 հազար ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի նոտարական պալատի հաշվի համարի վրա,**
- 4) նոտարը կարող է ենթարկվել դրամական տույժի՝ 20000 հազար ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի նոտարական պալատի հաշվի համարի վրա:

(Նոտարական էթիկայի կանոններ, 9-րդ կետի, 2-րդ ենթակետ)